

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2020-5-3-Ա

ք. Երևան

20.08.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի օգոստոսի 20-ի նիստում քննարկեց 2020 թվականի հուլիսի 27-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ Օբշչեստվո ս Օգրանիչեննոյ Օտվետստվեննոստյու «Նեվիննոմիսսկիյ մասլոեկստոռակցիոննիյ զավոդ» (սլ. Matrosova 8, g. Nevinnomysk, Stavropolskiy kray, 357101, Russian Federation, RU) ընկերության բողոքը «КУБАНСКОЕ ЗОЛОТО» (№20191758) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված ԱԾՄԴ-ի 29-րդ դասի՝ «սննդային յուղեր և ճարպեր» ապրանքների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում վերոնշյալ ապրանքների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ ռուսական «ООО Калория» ընկերության կողմից օգտագործվող «Кубанское Золото» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին կարող եք տեղեկություն ստանալ

<https://kaloriya.org/shop/maslo-slivochnoe-kubanskoe-zolto-450g> ինտերնետային կայքում
և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին»
ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի
քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն
ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու
վերաբերյալ, քանի որ հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես
ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի
ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից
դուրս՝ ռուսական «ООО Калория» ընկերության կողմից օգտագործվող «Кубанское
Золото» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկությունն առկա է
<https://kaloriya.org/shop/maslo-slivochnoe-kubanskoe-zolto-450g> ինտերնետային կայքում
և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման
արդյունքների հետ և պնդում էր, որ մերժված և հակադրված ապրանքային նշանները
շփոթելու աստիճան նման չեն և որոշ ապրանքների համար նրկայացված
ապրանքային նշանը կարող է գրանցվել:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է
և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի
հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն
որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի
նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության
բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ
ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից
ներկայացված՝ «КУБАНСКОЕ ЗОЛОТО» (No20191758) ապրանքային նշանի
գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և
կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ
վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ